Ալագուլյան Ք. Ա.
Տպագիր և հեռարձակվող լրատվամիջոցների
ամբիոնի դասախոս
Էլ. փոստ՝ christ1700@yahoo.com

ԱՊՐԻԼՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՀՀ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐՈՒՄ. ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Բանալի բառեր - *ապրիլյան պատերազմ, ռազմական գործողություններ, պետական գաղտնիք, զանգվածային լրատվամիջոցներ, լրագրող, տեղեկատվության ազատություն*

Ժամանակակից պատերազմներում կարևոր նշանակություն ունի ինֆորմացիոն տարրը, որը, առանց բացառության, կազմում է պատերազմների բաղկացուցիչ մասը: Այս առումով առանձնահատուկ նշանակություն ունի այն, թե ինչպես են կատարում իրենց աշխատանքը հատկապես լրատվամիջոցները: Նրանց աշխատանքը կարող է հանգեցնել թե՛ հակամարտության բռնկման և թեժացման, թե՛ խաղաղության: 1994 թ.-ին ռուանդական RTLM ռադիոընկերության լուսաբանումները հանգեցրին թութսի ցեղախմբի սոսկալի կոտորածների[1]: Եվ ընդհակառակը, նույն Ռուանդայի դեպքում լրատվամիջոցների աշխատանքի արդյունքը եղավ այն, որ ստեղծվեց ռազմական տրիբունալ, պատասխանատվության կանչվեցին ցեղասպանության մեղավորները:

Այս դրույթները ընդհանուր առմամբ կիրառելի են բոլոր դեպքերում, սակայն եթե լրատվամիջոցը կամ լրատվամիջոցները պատկանում են այն երկրներից որևէ մեկին, որը հակամարտող կողմ է, ապա հակամարտությունների լուսաբանման առումով կարող է այլ

[1] «RTLM» ռադիոընկերության եթերից այսպիսի կոչեր էին հնչում. «Դուք պետք է սպանեք թութսիներին: Մենք պետք է վերջ տանք թութսիներին, նրանց պետք է մաքրել երկրի երեսից»: Այսպիսի կոչերի համար այդ ռադիոընկերությունը նույնիսկ անվանեցին «ատելության ռադիոընկերություն»:

պատկեր ստացվել: Ըստ այդմ՝ լրատվամիջոցների և լրագրողների աշխատանքը, արտահայտված դիրքորոշմամբ պայմանավորված, կարելի է բաժանել երեք խմբի՝

- անկողմնակալ և օբյեկտիվ տեղեկացում՝ ելնելով միմիայն հումանիտար և համամարդկային սկզբունքների դիրքերից,
- իրադարձությունների մասին տեղեկացում՝ սատարելով սեփական երկրի ռազմական քաղաքականությունն ու ջանքերը,
- իրադարձությունների մասին տեղեկացում՝ սատարելով հակառակորդի ռազմական քաղաքականությունն ու ջանքերը:

Ըստ էության, ռազմական հակամարտությունների լուսաբանմանը վերաբերող գրականության մեջ առաջնությունը տրված է առաջին սկզբունքին, որը միակ ճիշտ տարբերակն է համարվում, սակայն ժամանակակից իրողությունները ցույց տվեցին, որ դա հաճախ հակասությունների տեղիք է տալիս: Ամերիկյան և եվրոպական լրատվամիջոցների աշխատանքը ցույց տվեց, որ Հարավսլավիայի, Իրաքի ու Աֆղանստանի, այժմ նաև Սիրիայի հակամարտության լուսաբանման ժամանակ այդ լրատվամիջոցները ակնհայտորեն ոչ միայն տեղեկատվության, այլև քարոզչության միջոց էին: Եվ դա օրինաչափ համարվեց: Միջազգային տեսաբանները նշում են, որ ամենևին չպետք է ամաչել նրանից, որ իրենց մասնագիտական պարտքը կատարելով և պահպանելով Ժենևի կոնվենցիայի դրույթները՝ լրագրողները ներդրում են ունենում իրենց երկրի կողմից ռազմական ջանքերի կիրառման գործում: Այդ դիրքորոշումն ընդունելի է և ամենևին չի հակասում մասնագիտական էթիկային[2]:

Ապրիլյան պատերազմի լուսաբանման առանձնահատկությունները քննելիս անհրաժեշտ է նկատի ունենալ հետևյալ հանգամանքները.

- հասարակությանն ապահովել սպառիչ ու անհրաժեշտ տեղեկատվությամբ՝ պահպանելով մասնագիտական էթիկան,

[2] http://www.history-journal.ru/index.php?request=full&id=223

- ճշտել տեղեկատվությունը հնարավոր բոլոր աղբյուրներից, հակառակ դեպքում տեղեկացնել, որ դա ձեռք է բերված մեկ աղբյուրից,
- մեդիահարթակներում ապահովել մարդկանց կարծիքը՝ հատկապես խաղաղության վերաբերյալ,
- լուսաբանումների առանցքում դնել ոչ թե պատերազմի հրահրման, այլ խաղաղության հասնելու ճանապարհների որոնումը: Ըստ այդմ՝ լրագրողների աշխատանքում գլխավոր նպատակ համարել հակամարտության խաղաղ ելքին նպաստելը[3]:

Ստորև առանձին ենթագլուխներով կանդրադառնանք ապրիլյան պատերազմի լուսաբանման հարցերին՝ ընդգծելով հատկապես իրավական ու էթիկական խնդիրները և քննարկելով հայաստանյան մամուլի աշխատանքի ընդհանուր պատկերը:

1. Եզրույթների կիրառումը

2016 թ. ապրիլի 2-ին սկսված ռազմական ակտիվ գործողությունները գործնականում թե՛ քանակական, թե՛ որակական ցուցանիշներով իրենց նախադեպը չունեին: Սակայն դա միանգամից հասկանալի չէր լրատվամիջոցներին: Հետևաբար սկզբնական շրջանում թերըմբռնում կար, թե ինչ որակում տալ տեղի ունեցող իրադարձություններին: Պաշտոնական առաջին հրապարակումն արվեց Երևանի ժամանակով ժամը 8:18-ին ԼՂՀ պաշտպանության բանակի լրատվական ծառայության կողմից: Հաղորդագրությունում մասնավորապես գրված էր. «Ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը շփման գծի հարավային, հարավարևելյան և հյուսիսարևելյան ուղղություններով հակառակորդը ձեռնարկել է **բացահայտ հարձակողական գործողություններ**՝ այլ զինատեսակների հետ օգտագործելով հրետանի, զրահատեխնիկա և օդուժ: Այս մասին հայտնում են ԼՂՀ ՊՆ-ից:

[3] Media in Wartime: The code for the coverage of the Colombian armed conflict, p. 169.

Բացի առաջնագծում ընթացող մարտերից, հակառակորդը հրետանային հարվածներ է հասցրել խաղաղ բնակավայրերին և մի շարք զորամասերի մշտական տեղակայման վայրերին:

Այս պահի դրությամբ ղարաբաղա-ադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծի ողջ երկարությամբ տեղի են ունենում **թեժ բախումներ**:

ՊԲ առաջապահ ստորաբաժանումները, ընդունելով հակառակորդի մարտահրավերը, վարում են հուսալի պաշտպանական մարտեր: Առաջնագծում ստեղծված իրադրության մասին առավել մանրամասն կանդրադառնանք մեր առաջիկա հաղորդագրություններում»[4]:

Այս հաղորդագրությունը տարածեցին հայաստանյան գրեթե բոլոր լրատվամիջոցները: Ուշադրություն դարձնենք, որ հաղորդագրության մեջ, հետևաբար լրատվամիջոցների հրապարակումներում օգտագործվում էին միայն **հարձակողական գործողություններ, թեժ բախումներ** արտահայտությունները: Զանգվածային լրատվության միջոցների ձևակերպումները հենց դրանց շրջանակում էին, քանի որ լրատվամիջոցների՝ գոնե առաջին օրերի հրապարակումները գլխավորապես հիմնված էին պաշտոնական աղբյուրների վրա: Եվ հաջորդող օրերին հաղորդագրություններում ու հետևաբար լրատվամիջոցների հրապարակումներում սկսեցին կիրառվել նաև **նախահարձակ գործողություններ, ագրեսիվ ռազմական գործողություններ** ձևակերպումները: Ապրիլի 2-ից մինչև ապրիլի 5-ն ընկած ակտիվ ռազմական գործողությունների ընթացքում պաշտոնական հաղորդագրություններում չկար որևէ տեքստ, որտեղ օգտագործվեր «պատերազմ» եզրույթը:

Նկատի ունենալով նաև այն, որ դեռ 2015 թ.-ի օգոստոսից կիրառվում էին մեծ տրամաչափի զենքեր, հարվածի տակ էին նաև խաղաղ բնակավայրերը, իսկ այս դեպքում միայն օդուժ էր ավելացել, առաջին հայացքից դժվար էր պաշտոնական հաղորդագրություններից հասկանալ՝ նախորդ շրջանում տեղի ունեցածի

[4] http://nkrmil.am/news/view/198

կրկնությո՞ւնն էր՝ փոքր տարբերությամբ, թե՞ մեկ այլ բան: Մինչդեռ թե՛ կրակի լարվածությունն ու ընտրված թիրախների խորությունը, թե՛ օգտագործվող զինանոցը ուղղակի խոսում էին պատերազմի ակտիվ փուլի մասին:

«Պատերազմ» հասկացության սահմանումները գիտական գրականության մեջ բավական շատ են, սակայն մենք որպես օրինակ կմեջբերենք թերևս առավել ընդգրկուն տարբերակներից մեկը: Մասնավորապես «Միջազգային իրավունքի բառարան»-ում (The international law dictionary) հեղինակներ Ռոբերտ Բլեդսոն և Ադամ Բոսզեկը հետևյալ սահմանումն են առաջարկում. «Երկու կամ ավելի պետությունների միջև թշնամական զինված գործողությունների կարգավիճակ կամ հանգամանք»: Ընդ որում՝ հեղինակները նշում են նաև այն դեպքերը, թե երբ է պատերազմի իրավական կարգավիճակ ստեղծվում՝ առանձնացնելով երեք կետ՝

1. պատերազմի մասին պաշտոնական հայտարարություն,
2. մի պետության կամ պետությունների խմբի կողմից մյուսների նկատմամբ զինված ռազմական գործողությունների վարման ընթացք՝ ենթադրյալ ռազմատենչ մտադրությամբ կամ անգամ առանց մտադրության,
3. այնպիսի գործողություններ, որոնք բավականաչափ լուրջ բնույթ ունեն և հանգեցնում են երկարաձգված պատերազմական վիճակի, անգամ եթե երկու կողմն էլ հերքում է ռազմատենչ մտադրությունները»[5]:

Միայն այս բնորոշումների մի մասը բավարար են տեղի ունեցածը պատերազմ անվանելու համար:

Բայց պատերազմ է, թե՝ ոչ, առաջինը պաշտոնական աղբյուրներն են պատասխանատու եզրույթը շրջանառության մեջ դնելու համար: Դեռևս 2008-ի օգոստոսին, երբ սկսվեց ռուս-վրացական պատերազմը, անգլալեզու «Russia Today» ռուսական ալիքի լուսաբանման ժամանակ, ընդունված ձևաչափի համաձայն, էկրանին նաև կոնկրետ իրավիճակի բնորոշումներ էին տեղադրվում: Օրի-

[5] http://www.duhaime.org/LegalDictionary/W/War.aspx

նակ՝ թողարկումներից մեկում՝ լուսագրում, գրված էր. «…1, 400 սպանված պատերազմի՝ ավելի քան 24 ժամվա ընթացքում»[6]: Հեռուստաալիքի գլխավոր խմբագիր Մարգարիտա Սիմոնյանի խոսքով՝ այդօրինակ կոնկրետ ձևակերպումներն իրենք հրապարակում են վերնագրերում, եթե գոնե մեկ անգամ այն ասվել է պատասխանատու պաշտոնյայի բերանից[7]:

Բայց, անկախ ամեն ինչից, «պատերազմ», հասկացությունը մտավ գործածության մեջ կրակի դադարեցման մասին բանավոր համաձայնեցումից հետո: Ըստ էության, սա ոչ այնքան իրավական կարգավիճակի, որքան տեղի ունեցողի նկարագրական ու զգացական ձևակերպում էր: Սա նաև տեղ թողեց, որ այս դեպքում իրավական նշանակություն ունեցող ձևակերպումը՝ որպես պատերազմ ներմուծվի ոչ թե պաշտոնական շրջանակից, այլ լրատվամիջոցներն իրենք անվանեցին այն պատերազմ՝ տարբեր ձևակերպումներով՝ Ապրիլյան պատերազմ, 4-օրյա պատերազմ՝ այն կիրառելի դարձնելով պաշտոնյաների հայտարարություններում:

Այստեղ անհրաժեշտ էր նկատի ունենալ, որ 90-ականների սկզբին Արցախյան պատերազմը, չնայած հայտարարված չլինելուն, իրավական առումով այդպես էլ չի ավարտվել: 1994 թ.-ի հրադադարի մասին փաստաթուղթն ընդամենը վկայում է ռազմական գործողությունների ակտիվ փուլի և ոչ թե պատերազմի ավարտի մասին: Այն ավարտված կարելի է համարել միայն Խաղաղության պայմանագրի ստորագրման դեպքում: Ավելի քան 20 տարվա ընթացքում, հաշվի առնելով հարաբերական անդորրը, պաշտոնական աղբյուրները կիրառել էին «ո՛չ պատերազմ, ո՛չ խաղաղություն» արտահայտությունը, սակայն մարտական իրադրության որակական այսպիսի փոփոխության դեպքում, երբ արդեն պաշտոնապես խոսվեց նախահարձակ գործողությունների մասին, որոնց հաջորդեցին ռազմական լարված գործողություններ, ենթադրվում էր, որ պաշտոնական աղբյուրներում պետք է փոխվեր «ո՛չ պատերազմ, ո՛չ խա-

[6] Russia Today, Newscast, 07.08.2008.

[7] Հատված Russia Today-ի գլխավոր խմբագիր Մարգարիտա Սիմոնյանի հետ զրույցից, Մոսկվա, 8.08.2008:

ղաղություն» որակումը և համապատասխան ձևակերպում ստանար[8]: Գործնականում այն, ինչ տեղի էր ունենում, վերադարձ էր պատերազմի ակտիվ փուլին: Հետևաբար ապրիլյան գործողությունները իրականում շրջանառության մեջ վերադարձրին «պատերազմ» հասկացությունը:

Առաջին հայացքից գուցե անկարևոր թվա զուտ «պատերազմ» բառի օգտագործումը հեռուստաեթերում կամ այլ լրատվամիջոցներում: Սակայն կոնկրետ հասկացության գործածումը մի քանի խնդիր էր լուծում՝

- հստակ իրավական կարգավիճակի ստեղծում՝ դրանից բխող գործողություններով և հետևանքներով,
- տարընմբռնումներից եւ թյուրիմացություններից խուսափում, հետևաբար տարերային կերպով ձևակերպումների բացառում,
- տեղի ունեցող իրադարձությունների մասին համապարփակ ու ամբողջական պատկերացման ապահովում,
- հանրության ստվար զանգվածին ընդգրկող գործողությունների մասին հանրային իրազեկում,
- միջազգային ատյաններում պատասխանատվության հարցի բարձրացման հիմքերի ստեղծում:

2. Տեղյակ լինելու իրավունք

Նախ բացահայտենք տեղյակ լինելու իրավունքի իրավական երաշխիքների շրջանակը: Այս դեպքում լրատվամիջոցները իրենց աշխատանքը կազմակերպելիս հիմնվում են ոչ միայն քաղաքացիների տեղեկացված լինելու համար անհրաժեշտ, այլև բուն լրատ-

[8] 2015 թ. դեկտեմբերին ՊՆ մամուլի քարտուղարը առաջարկեց իրավիճակը անվանել ոչ թե պատերազմ կամ խաղաղություն, այլ պատերազմ՝ պարզաբանելով, որ այն սողացող պատերազմ է: Բացատրությունը նաև այն էր, որ այժմ պատերազմի բնույթը փոխվել է: Սակայն մամուլը լրջորեն քննադատեց այս մոտեցումը: Ըստ էության, սա վկայում էր այն մասին, որ հասարակական-քաղաքական շրջանակներն ու մամուլը դեռևս պատրաստ չեն պատերազմի բնույթի և ժամանակակից դրսևորումների մասին նոր պատկերացումներին:

վական գործունեության ազատությունը երաշխավորող իրավական դրույթների վրա, որոնք սահմանված են ՀՀ Սահմանադրությամբ, «Տեղեկատվության ազատության մասին» և «Զանգվածային լրատվության մասին» օրենքներով:

Ինչպե՞ս իրականացվեց տեղյակ լինելու այդ իրավունքը: Նշենք այն աղբյուրները, որոնցից լրատվամիջոցները ստանում էին տեղեկատվությունը՝

ԼՂՀ ՊՆ մամուլի հաղորդագրություններ

ԼՂՀ մամուլի ասուլիսներ

ՀՀ ՊՆ մամուլի քարտուղարի ֆեյսբուքյան հրապարակումներ և հարցազրույցներ

Լրատվամիջոցների այլընտրանքային պաշտոնական աղբյուրներ

Լրատվամիջոցների սեփական ուսումնասիրություններ եւ հրապարակումներ

Գործնականում լրատվական ողջ դաշտը սկսեց աշխատել արտակարգ ռեժիմով, բայց սկզբում տեղեկատվության համակարգված լինելու խնդիր կար: Տեղեկատվությունը ցաքուցրիվ էր, հաճախ՝ հակասական: Բայց արտակարգ ռեժիմով աշխատելը աշխատանքի ձևն էր: Բովանդակային առումով այստեղ անհրաժեշտ է կանգ առնել մի քանի կարևոր հարցերի վրա:

Ռազմական ակտիվ գործողություններին զուգահեռ ինտենսիվ էր նաև տեղեկատվական ոլորտը: Չնայած դրան՝ շատ դեպքերում ակտիվության նվազում էր նկատվում՝ որպես արդյունք ստեղծելով տեղեկատվական վակուում, որը բազմաթիվ այլ, վնասակար տեղեկատվությամբ լցվելու վտանգ էր ստեղծում:

Մասնավորապես ապրիլի 2-ին՝ ժամը 12:50-ին՝ ԼՂՀ ՊՆ հաղորդագրությունը տարածելուց հետո, իրավիճակի վերաբերյալ հաջորդ հաղորդագրությունը ստացվել է 18:50-ին՝ վեց ժամ առանց պաշտոնական տեղեկությունների՝ այդ ընթացքում բավական մեծ բաց թողնելով: Թեև մեծ մասամբ բացը լրացվում էր ՀՀ ՊՆ մամուլի

քարտուղարի ինտենսիվ հրապարակումներում, սակայն անգամ նման դեպքերում դադարները ուղղակի վտանգավոր են, հատկապես եթե ռազմական գործողություններ են ընթանում:

Այդ օրերի լրատվական ողջ հոսքի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ հայկական մեդիաոլորտում արագ հայտնվում էին հայալեզու ադրբեջանական կայքեր և փորձում ապատեղեկատվություն տարածել: Ավելին՝ ադրբեջանական մամուլը սկսեց հրապարակել կեղծ սյուժեներ գրավված տարածքների վերաբերյալ: Ապրիլի երկուսի առավոտյան արդեն տարբեր աղբյուրներով ստացվում էին տեղեկություններ գրավված դիրքերի մասին: Պաշտոնական հրապարակումներում սկզբում նման տեղեկություններին անդրադարձ չեղավ, սակայն ավելի ուշ՝ դիրքերից մեկի վերադարձից հետո, այդ մասին տեղեկատվություն հրապարակվեց: Նկատի ունենալով ժամանակակից տեխնոլոգիաների առկայությունը՝ անհրաժեշտություն է առաջանում, որ պաշտոնական աղբյուրներն ու լրատվամիջոցները առաջինը անդրադառնան այդ տարածվող տեղեկություններին, հակառակ դեպքում դա կարող էր հանգեցնել բացասական հետևանքի՝ ձնագնդի էֆեկտով: Բացի դրանից՝ նաև նկատելի էր տեղի ունեցող իրադարձությունների վիզուալացման խնդիրը:

Նման դեպքերում, երբ հայտնի էին ընդհանուր ուղղությունները, իսկ պաշտոնական հրապարակումներում հատկապես կոնկրետ ուղղություններ էին նշվում, անհրաժեշտ էր, որ լրատվամիջոցները առավել հաճախ ապահովեին տեղի ունեցողի քարտեզային նկարագրություն՝ ընդհանուր մարտադաշտը պատկերացնելու համար: Համեմատության համար նշենք, որ Սիրիայի պատերազմի դեպքում գրեթե ամեն օր ուժերի դասավորության քարտեզներ են հրապարակվում:

Լրատվամիջոցները միաժամանակ զերծ մնացին հնարավոր զոհերի վերաբերյալ տեղեկություններ հրապարակելուց՝ սպասելով պաշտոնական արդյունքներին, որոնք հրապարակեց երկրի նախագահ Սերժ Սարգսյանը:

Իհարկե, հասկանալի է, թե լրատվամիջոցները ինչու չհրապարակեցին դրանք: Մի կողմից՝ դեռ հավաստի տվյալներ չկային,

մյուս կողմից՝ ամեն կյանքի հետ պետք է զգույշ վարվել՝ մարդու հարազատներին չզրկելով վերջին հույսից: Բայց այստեղ անհրաժեշտ է նկատի առնել հետևյալը. եթե տեղի են ունենում ռազմական գործողություններ, և հակառակորդը արդեն զոհեր ունի, ավելին՝ հակառակորդի զոհերի թվաքանակը հաշվված է[9], ապա հայկական կողմից թվային տվյալներ ընդհանրապես չհրապարակելը **անչափելիության էֆեկտ** է (ընդգծումը՝ Ք.Ա.-ի) ստեղծում՝ ամեն ինչ թողնելով երևակայությանը: Նման դեպքերում մարդկանց մոտ տպավորություն է ստեղծվում, թե որովհետև այնքան շատ են, չեն ուզում տվյալներ հրապարակել: Ապա վտանգ է առաջանում, որ հետագայում ասված տեղեկատվությունը կասկածի տակ կդրվի: Այս դեպքում անհրաժեշտություն էր, որ լրատվամիջոցների և պաշտոնական աղբյուրների համագործակցությամբ հստակություն մտցվեր. գուցե չափաբաժիններով, ինչպես եղավ հաջորդող օրերին, բայց անպայման զոհերի և վիրավորների վերաբերյալ թվային տվյալներ հրապարակվեին:

Ռազմական գործողությունների առաջին երկու օրերին նաև սահմանին կատարվողի, տեսանյութերի ու լուսանկարների պակաս էր զգացվում: Բնականաբար, կային օբյեկտիվ ու սուբյեկտիվ հանգամանքներ:

Ռազմական գործողությունների առաջին իսկ ժամերին տեղեկություններ տարածվեցին գրավված դիրքերի, ադրբեջանցիների հսկողության տակ գտնվող գյուղերի մասին: Ավելին՝ երբ հայտնի դարձավ, որ գրավված է Լելե Թեփեի բարձունքը, դրան զուգահեռ՝ շրջանառության մեջ դրվեց մեկ այլ տեղեկություն: Ըստ այդմ՝ խոսքը Արայի լեռան մասին էր: Դա չէր համապատասխանում իրականությանը, սակայն հերքում չհետևեց: Լրատվամիջոցներն ու առանձին բլոգերները փորձեցին ճշտել, որ Արայի լեռը չէր կարող լինել, քանի որ այն շատ հեռու է: Այս մասին տեղեկություններին, սակայն

[9] http://www.nkrmil.am/news/view/194 ժամը 18:50-ի ԼՂՀ ՊԲ մամուլի հաղորդագրության մեջ նշված էր, որ ադրբեջանական զինուժը տվել է 200-ից ավելի կորուստ՝ այդ հատվածում միայն նշելով, որ հայկական կողմը ևս կորուստներ ունի, սակայն որևէ տեղեկություն չէր հաղորդվում:

պաշտոնական մակարդակով ոչ մի անդրադարձ չեղավ, ուստի սա վստահության խնդիր և խուճապ կարող է առաջացնել:

Բացի սրանից՝ անհրաժեշտ էր պատերազմական պատմություններում հնարավորին չափ պահպանել հետևողականությունը՝ ուշադրություն դարձնելով այն հանգամանքին, թե հրապարակված պատմության մեջ որքանով է տրամաբանական փաստերի շարադրանքը կամ հավանական պատմությունը: Հակառակ դեպքում հրապարակումից հետո դժվար է փոխել դրա թողած ազդեցությունը: Թեժ կետերում աշխատող լրագրողները խորհուրդ են տալիս ամբողջությամբ հավատալ նրան, ինչ լրագրողը տեսել է իր աչքերով: Բանն այն է, որ յուրաքանչյուր զինված հակամարտության ընթացքում ծնվում են լեգենդներ և միֆեր:

Մասնավորապես ապրիլի սկզբին լրատվամիջոցների մի մասը հրապարակեց 26-ամյա կապիտան Արմենակ Ուրֆանյանի պատմությունը: Ըստ այդ պատմության՝ կապիտանը, մարտի բռնվելով հակառակորդի հետ, խոցելով մեկ տանկ և թշնամու մեկ տասնյակ զինվորի, թույլ չի տվել իրեն շրջապատել և վերջին նռնակով իր հետ պայթեցրել է մոտեցողներին: Ավելի ուշ, սակայն, պարզվեց, որ նա մահացել է արկի պայթյունից: Եվ այս հերոսական պատմությունը, որին մարդիկ հավատացել էին, կորցրեց իր նշանակությունը: Ուստի վտանգ է առաջանում, որ շատ պատմություններ, որոնք հաղորդվում են լրատվամիջոցներով, և որոնց մի մասը վերցված է պաշտոնական աղբյուրներից, ուղղակի սուտ են: Հերքվելու դեպքում դրանց թողած բացասական ազդեցությունը կարող է ավելի մեծ վնաս հասցնել: Մեկ դեպքի պատճառով կարող է կասկածի տակ դրվել պատերազմում հերոսական օրինակների և ընդհանրապես իրադարձությունների հավաստիությունը:

3. Անհրաժեշտ սահմանափակումներ

Խոսքի և տեղեկատվության ազատությանը զուգահեռ Սահմանադրության 42–րդ հոդվածի երրորդ մասը առանձնացնում է այն դեպքերը, երբ անհրաժեշտաբար պետք է սահմանափակվի խոսքի

և տեղեկատվության ազատությունը: Մասնավորապես «**այդ ազատությունը կարող է սահմանափակվել օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների ու ազատությունների պաշտպանության նպատակով**»[10]: Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածը, մի կողմից, սահմանում է այդ ազատությունը, մյուս կողմից՝ դարձյալ խոսում սահմանափակումների մասին: Դրանում առաջնային տեղը տրված է հենց հասարակական շահերի համար նախատեսված սահմանափակումներին, որոնց թվում են ազգային անվտանգությունը, տարածքային ամբողջականությունը, հասարակական անվտանգությունը, հասարակական առողջությունը և բարոյականությունը: Ապրիլյան ռազմական ակտիվ գործողությունների ժամանակահատվածում ո՛չ ՀՀ, ո՛չ ԼՂՀ տարածքում արտակարգ կամ ռազմական դրություն չի հայտարարվել, ուստի վերոնշյալ իրավական սահմանափակումները չէին կարող կիրառվել:

Բայց պետք է նկատի ունենանք, որ, անկախ ռազմական ու արտակարգ դրությունից, իրավական որոշ դրույթներ պարտադիր կիրառելի են բոլոր ժամանակներում: Առավելապես ուշադրություն հրավիրենք պետական գաղտնիքի վրա: Պետական գաղտնիք համարվող տեղեկությունների շարքին են դասվում ՀՀ ռազմական, արտաքին հարաբերությունների, տնտեսական, գիտատեխնիկական, հետախուզական, հակահետախուզական, օպերատիվ–հետախուզական գործունեության բնագավառներին վերաբերող տեղեկությունները, որոնց տարածումը կարող է **ծանր հետևանքներ առաջացնել** ՀՀ անվտանգության համար[11]: Բայցևայնպես, այս տեղեկությունները համարվում են ՀՀ սեփականությունը, հետևաբար պաշտպանվում են պետության կողմից: Ուստի դրանց տարածման հարցում իրավական առումով կարող է մեղավոր լինել մեկ կամ երկու մարդ, որոնք ի պաշտոնե պարտավոր էին պահպանել գաղտ-

[10] ՀՀ Սահմանադրություն, հոդված 42, ընդունվել է 06.12.15:
[11] «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենք, հոդված 2, 1996:

նիքը, իսկ բարոյական առումով՝ նաև այլ մարդիկ, օրինակ՝ լրագրողները: Միաժամանակ լրատվամիջոցների գործունեությունը կարգավորող օրենքները լրատվամիջոցին արգելում են հրապարակել պետական գաղտնիքը: Ուստի մինչ հրապարակելը կամ չհրապարակելը պետք է պարզել, թե որոնք են այն տեղեկությունները, որ կարող են պետական ու ծառայողական գաղտնիք համարվել: Կառավարությունը հատուկ որոշմամբ սահմանել է պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների ցանկը: Դրանում 33 կետ է նշված[12]:

- Առաջին խումբը կազմում են ռազմական բնագավառի տեղեկությունները: Այդ շարքում են, օրինակ, զորքերի զարգացման թիվը, մարտական կազմը կամ քանակը, նրանց մարտական պատրաստականությունը, օպերատիվ ծրագրերը, ռազմաքաղաքական կամ օպերատիվ իրադրությունը, կազմը և զորքերի կառավարումը, զորքերի տեղաբաշխումը, թիվը կամ սահմանապահ զորքերի էությունը բացահայտող տեղեկությունները և այլն:
- Երկրորդ խմբում արտաքին հարաբերություններին առնչվող տեղեկություններն են, որոնց շարքում են, օրինակ, արտաքին քաղաքականության, արտաքին առևտրի, օտարերկրյա պետությունների հետ համագործակցության էությունը բացահայտող տեղեկությունները:
- Երրորդ խմբում տնտեսության ու գիտատեխնիկական բնագավառի տեղեկություններն են, ինչպիսիք են պատերազմի ժամանակ ՀՀ տնտեսության կայուն գործունեության նախապատրաստումը, գիտության ու տեխնիկայի նորագույն նվաճումների էությունը բացահայտող տեղեկությունները, օրինակ՝ անօդաչու սարքերին առնչվող:
- Չորրորդ խմբում հետախուզական ու հակահետախուզական բնույթի տեղեկություններն են:

---

[12] «ՀՀ պետական գաղտնիքի շարքը դասվող տեղեկությունների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության թիվ 173 որոշում, 13.03.1998:

Պարզ համեմատությունն էլ ցույց է տալիս, որ պետական և ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկությունների ցանկում զգալի տեղ են զբաղեցնում ռազմական բնույթի տեղեկությունները:

Ռազմական գործողությունների ընթացքում ոչ թե ինչ–որ մեկի մեղքով, այլ ուղղակիորեն գաղտնիություն պարունակող տեղեկությունների տիրապետող են դառնում նաև լրագրողները: Ապրիլյան ռազմական գործողությունների ընթացքում լրատվամիջոցները երբեմն հայտնվում էին այնպիսի վիճակում, որ հաճախ դժվար էր որոշել, թե, օրինակ, ինչ տեղեկատվություն կարելի է հրապարակել, ինչը՝ ոչ: Կառավարության այդ որոշման շրջանակում անգամ երբեմն դժվար է կողմնորոշվել: Լրատվամիջոցները հիմնականում բավական զգուշավորություն ցուցաբերեցին կադրերի, լուսանկարների հրապարակման հարցում, բայց դա զուտ ներըմբռնողական բնույթ էր կրում: Հստակ սահմաններ, թե որը կարելի է հրապարակել, չկային, քանի որ նման դեպքերում աշխատանքի հստակ կանոնները հստակեցված չէին, ուստի երբեմն անզգուշորեն հրապարակված կադրերը կարող էին բացասական հետևանքներ ունենալ:

Դիտարկենք մի քանի դեպք:

Ապրիլի 2-ին, այսինքն՝ ռազմական գործողությունների առաջին իսկ ժամերին, «Սպուտնիկ-Արմենիան» հրապարակեց Ստեփանակերտից հակամարտության գոտի շտապող ռազմական տեխնիկայի շարժը[13]: Այն գործնականում տեղեկատվություն է հրապարակում օպերատիվ իրադրության, զորքերի կառավարման համակարգի մասին: Տեղեկությունների այդ խմբի հրապարակումը արգելված է օրենքով, քանի որ դա կարող էր՝

ա) մղել հակառակորդին առավել մեծ ուժեր կուտակելու սահմանին,

բ) տպավորություն ստեղծել, որ մարտագծում ռազմական տեխնիկայի և ուժի փոքր քանակություն կա, և առավել անկանխատեսելի գործողությունների մղել,

---

[13] http://ren.tv/novosti/2016-04-02/po-ulicam-stepanakerta-v-zonu-konflikta-v-nkr-edut-tanki-video

գ) խուճապ առաջացնել հասարակության շրջանում, որը կարող էր նաև հակառակորդն օգտագործել քարոզչական նպատակով:

Ի դեպ, հեռուստաընկերությունները նման որևէ տեսանյութ չհրապարակեցին, մինչդեռ դրանք սկզբում տարածվեցին առցանց որոշ պարբերականներում, ապա հանվեցին:

«Ազատություն» ռադիոկայանի հրապարակած մի տեսանյութում[14] տեսանելի էին ռազմական տեխնիկայի տեղադրությունը, տեղակայման խտությունն ու ուղղվածությունը: Ընդ որում՝ լայնորեն օգտագործված էին կադրերի ընդհանուր պլանները:

Առավել բաց տեսարաններով նյութեր հրապարակվեցին «Ռոյթերս» գործակալության կողմից, որին հնարավորություն էր տրվել նկարահանումներ կատարելու առաջնագծին շատ մոտ դիրքերում: Հրապարակումը, որ տարածվեց նաև հայաստանյան լրատվամիջոցներով, ամբողջությամբ հնարավորություն էր տալիս մոտիկից դիտարկելու տեխնիկան, տեսնելու տեղադրման խտությունը:

Այս տեսակի տեղեկատվության հրապարակումից հետո հակառակորդը կարող է ուղղակիորեն ուսումնասիրել որոշ տեսանյութեր, համապատասխան եզրահանգումների գալ և ավելի մեծ սպառնալիք ստեղծել անվտանգության տեսանկյունից:

Այդուհանդերձ, ինչպե՞ս որոշել, թե որ տեղեկատվությունը հրապարակել՝ զերծ մնալով հնարավոր պետական գաղտնիքի կամ այնպիսի տեղեկատվության հրապարակումից, որը եթե նույնիսկ օրենքով նախատեսված չէ, ապա, միևնույն է, կարող է վնաս հասցնել ազգային անվտանգությանը: Այս դեպքերի համար ARTICLE 19 իրավապաշտպան կազմակերպությունը երեք քայլից բաղկացած թեստ է առաջարկում[15]: Այն սովորաբար առաջարկվում է պետական պաշտոնյաներին՝ կիրառելու այն դեպքերում, երբ տեղեկատ-

---

[14] http://www.azatutyun.am/a/27653809.html,
http://www.azatutyun.am/a/27654025.html

[15] **Դոյդոյան Շ.,** Ժողովրդավարության բանալին, Տեղեկատվության ազատություն, Եր., 2005, էջ 32:

վությունը գաղտնագրելու անհրաժեշտություն է զգացվում, բայց այս դեպքում կիրառելի կարող է լինել նաև լրագրողների համար:

Քայլ 1. Պարզել՝ արդյո՞ք պահանջվող տեղեկատվությունը առնչվում է այն տեղեկություններին, որոնք վերաբերում են երկրի «Տեղեկատվության ազատության մասին» օրենքով նախատեսված բացառություններին՝ ազգային անվտանգությանը կամ այլոց իրավունքներին:

Քայլ 2. Պարզել՝ արդյո՞ք այդ տեղեկատվության բացահայտումը էական վնաս կհասցնի այդ նպատակին:

Քայլ 3. Պարզել՝ արդյո՞ք այդ տեղեկատվության հրապարակումը ավելի մեծ օգուտ չի տա հասարակությանը, քան այն գաղտնի պահելը:

Քննարկելով «Սպուտնիկ-Արմենիա»-ի կողմից տեխնիկայի տեղաշարժի հրապարակումը՝ կարելի է անել հետևյալ եզրահանգումները.

ա) այն իսկապես առնչվում է անվտանգությանը,

բ) կարող է էական վնաս հասցնել:

Արդյո՞ք հասարակությունը դրանից առավել մեծ օգուտ կստանա: Բնականաբար՝ ոչ, եթե նույն հրապարակումը կարող է նպաստել թշնամու առավել մեծ համախմբմանը: Ավելին՝ տեսականորեն չի բացառվում նաև հարվածային ԱԹՍ-ի միջոցով հարված հասցնել շարասյանը, ինչի հետևանքով կարող է վնաս հասցվել ոչ միայն զինտեխնիկային ու անձնակազմին, այլև շրջակա բնակավայրի խաղաղ բնակչությանը:

Ըստ այդմ՝ առաջնագծում նկարահանումներ կատարելիս և կադրեր ու լուսանկարներ հրապարակելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ պետք է խուսափել զինտեխնիկայի ուղղությունների, զենքի քանակի, տեղադրությունների հստակ պատկերների ցուցադրումից, համայնապատկերներից և ընդհանուր պլաններից:

4. Մարդասիրության ու արժանապատվության չափանիշների պահպանումը

Հոգեբաններն ընդգծում են, որ լարանի համար առավել սթրեսային են լրագրողների որոշ գործողություններ, որոնք կարող են երբեմն անտեսվել՝ ելնելով տեղեկատվություն ապահովելու անհրաժեշտությունից: Սակայն անհրաժեշտ է ռազմական գործողությունների լուսաբանումը իրականացնել մասնագիտական էթիկայի նորմերին համապատասխան: Հետևաբար առանձնակի դաժանություն ցուցադրող կամ սթրեսոգեն այլ տեղեկատվության՝ տեսանյութերի կամ լուսանկարների հրապարակումը պետք է տեղի ունենա միայն բացառիկ դեպքերում: Դրանց հրապարակումը պետք է արդարացված լինի հանրային շահին ծառայելու փաստարկով: Առանձնացնենք այն դեպքերը, երբ տեսանկարահանումը կարող է ուղղակի սթրես առաջացնել.

ա) վշտի ու հուսահատության մեջ գտնվող մարդուն անհարմար վիճակում նկարահանելը,

բ) մարդուն ստորացված, նրա արժանապատվությունը նսեմացված վիճակում ցուցադրելը,

գ) կտտանքների, հոգեբանական և ֆիզիկական ծաղրանքի ենթարկվածների կամ ենթարկման կադրերի ու լուսանկարների ցուցադրումը[16]:

Լրատվամիջոցների ներկայացուցիչները հիմնականում հեռու էին թեժ կետերից, այդ պատճառով առաջնագծում վիրավոր կամ զոհված զինծառայողների պատկերող տեսարաններ չէին հրապարակվում: Միաժամանակ նկատելի էր, որ լրատվամիջոցները միահամուռ էին նաև այն կադրերը չհրապարակելու հարցում, որոնք հայտնվում էին աղբբեջանական լրատվամիջոցներում՝ որպես հայ զինծառայողների մահվան ապացույց: Դրանք հրապարակվեցին միայն ֆեյսբուքյան որոշ օգտատերերի կողմից:

---

[16] **Чемякин Ю. В.,** Политические коммуникации и информационная безопасность общества, Учебное пособие, Екатеринбург, 2008, стр. 6.

Լրատվամիջոցները հիմնականում զերծ մնացին նաև հիվանդանոցներում բուժում ստացող վիրավոր զինվորականների կամ ռազմական գործողությունների ժամանակ վիրավորված քաղաքացիների ու երեխաների մասին կադրերը, լուսանկարները ցուցադրելուց: Չնայած դրան՝ որոշ լուսանկարներ, որոնցում պահպանված չէր էթիկական նորմը, հրապարակվեցին:

Այսպես՝ էլեկտրոնային որոշ լրատվամիջոցներում հրապարակվեց երկու ոտքն անդամահատված մի զինվորականի լուսանկար, որը հայտնի դարձավ «Ժպտացող զինվոր» անվամբ: Լուսանկարն արված էր այնպես, որ ուշադրության կենտրոնում հայտնվեն նրա կտրված ոտքերը: Եվ որքան էլ ժպտում է, և այդ ժպիտը ամեն ինչ հաղթահարելու խորհրդանիշ է, միևնույն է հիշողության մեջ մնում է երկու ոտքը կտրված լինելու հանգամանքը: Ի՞նչ տվեց լուսանկարը: Եթե պատերազմ է, ապա հավանական է նման վիճակը: Եթե լուսանկարն անելիս ընտրվեին այլ ռակուրս և այլ պլան, արդարացված կլիներ: Հոգեբանորեն այն ծանր տպավորություն է թողնում թե՛ մեզ, թե՛ հարազատների վրա:

Էթիկայի տեսանկյունից միանգամայն անթույլատրելի օրինակ հրապարակել էր նաև «Փաստինֆո» կայքը: Տեղեկությունն այն մասին էր, թե ինչպես են խեղված վերադարձվել զինվորների մարմինները: Մասնավորապես 2016թ. ապրիլի 12-ի հրապարակման մեջ գրված է. «Փաստինֆո»-ի տեղեկություններով՝ զոհվածներից 17-ի մարմինները խեղված են եղել, բացակայել են ականջները, որոշ դեպքերում էլ ընդհանրապես բացակայել են ականջախեցիները: Զոհված հայ մարտիկների մարմինները եղել են անդամահատված, բացակայել են ձեռքերը, դաստակները, մարմինների վրա առկա են եղել ծակած-կտրած վնասվածքներ, մեկի դեպքում էլ բացակայել է աչքը»[17]:

Ի դեպ, խոսքը չի վերաբերում միայն հայ զինվորների նկատմամբ հարգանք պահպանելուն: Լուսաբանումները պետք է հիմնված լինեն ունիվերսալ սկզբունքների վրա: Ապրիլի սկզբի ռազ-

[17] https://www.pastinfo.am/hy/news/2016/04/12/

մական ինտենսիվ գործողությունների օրերին հիմնականում էլեկտրոնային լրատվամիջոցներում հրապարակվեցին ադրբեջանցի սպանված զինվորականների լուսանկարներ՝ առանց դեմքը փակելու: Այս դեպքում անհրաժեշտ է փակել մարդկանց դեմքը, հեռացնել առավել արյունոտ կադրերը կամ դարձյալ փակել՝ պահպանելով հարգանքը ոչ միայն զինվորականի, այլև հեռուստադիտողի նկատմամբ:

Կան նաև բացառիկ դեպքեր՝ հանրային հետաքրքրությամբ պայմանավորված, երբ արդարացվում է որոշակի «շեղումը» էթիկայից: Այստեղ անհրաժեշտ է տարանջատել հանրային **հետաքրքրություն** և **հանրային հետաքրքրասիրություն** հասկացությունները: Ընդ որում՝ նման դեպքերում դա ևս պետք է արվի՝ հնարավորինս հավատարիմ մնալով էթիկական ընդունված կողմնորոշիչներին: Այս իմաստով լավագույն օրինակ էր «Հետք» էլեկտրոնային կայքի 2016թ. ապրիլի 3-ի հրապարակումը[18]: Պարբերականը հրապարակել էր Թալիշ գյուղում ադրբեջանցի զինվորականների կատարած վայրագությունները փաստող լուսանկար՝ ցույց տալով գնդակահարված ծեր ամուսիններին՝ Վալերա Խալափյանին և կնոջը՝ Ռազմելային: Հրապարակման վերնագրում նախ գլխատառերով զգուշացում էր տրված, ապա առաջնորդողում «Հետք»-ը ներողություն էր խնդրել ընթերցողներից, որ ստիպված է վարքականոն խախտել, քանի որ այլ կերպ իրականությունը հնարավոր չէ ցույց տալ:

5. Հետկոնֆլիկտային լուսաբանումը

Հակամարտության ակտիվ փուլի ավարտմամբ լուսաբանումների կարևորությունը չի ավարտվում: Եթե այդ ընթացքում շեշտը հիմնականում տեղի ունեցածի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնելու վրա է դրված, ապա այս դեպքում լրատվամիջոցները պետք է իրականացնեն մի քանի գործառույթ.

---

[18] http://hetq.am/arm/news/66976/vayragutyunner-talishum-zgushacum-hraparakvats-e-gndakaharvats-andzanc-lusankar.html

ա) տեղեկատվություն տրամադրեն կոնֆլիկտի պասիվ շրջանի վերաբերյալ՝ ընդգծելով ընդհանուր միտումները,

բ) տեղ հատկացնեն հերոսական առանձին դրվագների, դրանցում ընդգրկված կերպարների մասին պատմությունների ներկայացմանը,

գ) տեղ հատկացնեն տեղի ունեցածի հետևանքների վերլուծմանը՝ խոսելով առավելություններից, ընդգծելով սխալները,

դ) ինչպես ռազմական գործողությունների ժամանակ, այնպես էլ հետո հարթակ լինեն խաղաղությանը նպաստող ու ամրապնդող հրապարակումների համար,

ե) լրատվական գործունեությամբ, ակտիվ լուսաբանումներով նպաստեն միջազգային ատյաններում հարցի բարձրացմանը եւ պատասխանատվության ենթարկելուն:

Առաջին 4 կետերում լրատվամիջոցները հիմնականում բավարար չափով լուսաբանումներ իրականացնում էին: Մասնավորապես նկատելի էր «Շանթ» ՀԸ-ի, «Ազատություն» ռադիոկայանի, «Սիվիլնեթ» համացանցային հեռուստաընկերության, «Հետք» կայքի աշխատանքը, որոնք օրական ու ժամային կտրվածքով էին տեղեկություններ հաղորդում: «Շանթ» հեռուստաընկերությունը նույնիսկ գրեթե չէր դադարեցնում հեռարձակումը:

Ինչ վերաբերում է 5–րդ կետին՝ միջազգային դատական ատյաններում պատասխանատվության հարցի բարձրացմանը նպաստելուն, ապա այստեղ պասիվություն է նկատվում: Սկզբում, ճիշտ է, հրապարակումներ լինում էին մարդու իրավունքների լայնածավալ խախտումների, Եվրոպական դատարան և միջազգային այլ ատյաններ դիմելու վերաբերյալ, բայց շատ կարճ ժամանակ անց շատ քիչ խոսվեց այդ մասին: Այս դեպքում վտանգ կա, որ ռազմական ակտիվ գործողությունների ավարտից հետո թույլ տրված ոճրագործությունները կարող են մոռացվել: Մինչդեռ լրագրողական աշխատանքը պետք է նպաստի նրան, որ այդ խնդիրները ներկայացվեն համապատասխան ատյաններում, համապա-

տասխան որակումներ տրվեն, և պատասխանատվության կանչվեն մեղավորները[19]:

Ամփոփում

- Ապրիլյան պատերազմի լուսաբանման ընդհանուր պատկերը սկզբում տարերային և չհամակարգված էր, սակայն ավելի ուշ հնարավոր եղավ համակարգել:
- Հրապարակումները իրականացվում էին երկու ուղղությամբ՝ տեղեկատվական և վերլուծական՝ տեղ հատկացնելով խաղաղության և համախմբման շեշտադրումներին: Հաճախ փաստերը միախառնված էին մեկնաբանություններին:
- Սկզբնական շրջանում լրատվամիջոցների համար դժվար էր կողմնորոշվել տեղի ունեցածի իրական բնույթի հարցում, քանի որ բացակայում էին իրավիճակի պաշտոնական հստակ բնորոշումները: Ի դեպ, դա տրված չէ նաև մինչև հիմա, և ոչ թե պաշտոնական աղբյուրները շրջանառության մեջ դրեցին կոնկրետ եզրույթը, այլ լրատվամիջոցները:
- Լրատվամիջոցների աշխատանքը հիմնականում հիմնված էր սեփական փորձառության վրա: Չկային ռազմական խնդիրների լուսաբանման հստակ չափանիշներ ու կողմնորոշիչներ, ինչը հակամարտության մեջ գտնվող պետություններում ուղղակի ցանկալի չէ:
- Լրատվամիջոցների համար տեղեկատվական հիմնական աղբյուրները ՀՀ ՊՆ մամուլի խոսնակի և ԼՂՀ ՊԲ պաշտոնական հաղորդագրություններն էին, սակայն դրանք բավարար չէին տեղեկատվական ողջ սպեկտրը ներկայացնելու համար:

[19] Մասնավորապես տարբեր երկրների լրատվամիջոցների ակտիվ աշխատանքի և լայն լուսաբանման շնորհիվ Ռուանդայի ցեղասպանության հարցով ռազմական տրիբունալ ստեղծվեց, որը քրեական պատասխանատվության ենթարկեց ցեղասպանության հիմնական մեղավորներին:

- Լրատվամիջոցների աշխատանքում զգացվում էր պաշտպանական գերատեսչությունները ներկայացնող պատասխանատու պաշտոնյաների կենդանի խոսքի, տեսանկարահանումներով խոսքերի պակաս:
- Ճիշտ է՝ լուսաբանումների խիստ պարբերականությունը հիմնականում պահպանվում էր, սակայն դրանք պետք է տեղի ունենային մոտավորապես այն տրամաբանությամբ, որ եթե անգամ ոչինչ չի կատարվում, դա ևս նորություն է:
- Չնայած ընդհանուր առմամբ էթիկական և իրավական չափանիշների պահպանմանը՝ նկատվում էին նաև հրապարակումներ, որոնք այդ նորմերի խախտումներ էին: Խոսքը վերաբերում է անձի արժանապատվությանը և առաջնագծում տեսանկարահանումների թույլատրելիության չափին:
- Ժամանակային լայն կտրվածքում պահպանված չէր հակամարտության և դրանից բխող հետևանքների, դրանց վերացման վերաբերյալ հրապարակումների հետևողականությունը:

Առաջարկություններ

Վերոնշյալ հարցերի քննարկումը և առանցքային խնդիրների վերհանումը հիմք են ստեղծում որոշակի փոփոխություններ իրականացնելու համար, որի նպատակը ռազմական գործողությունների լուսաբանման ժամանակ պատասխանատու և արհեստավարժ լուսաբանումների արդյունավետության մակարդակը բարձրացնելն է: Ըստ այդմ.

- Պահպանել չոր փաստերի ներկայացման սկզբունքը,
- Ստացված տեղեկատվությունը հրապարակելուց առաջ ուշադրություն դարձնել սկզբնաղբյուրին, ուշադիր ստուգել աղբյուրի վստահելիությունը, ճշտել պաշտոնական աղբյուրների հետ, համեմատություններ անել,
- Խուսափել խոշտանգումների վերաբերյալ մանրամասներ պարունակող հրապարակումներից: Չանտեսելով իրակա-

նությանը տեղյակ լինելու իրավունքը՝ անհրաժեշտ է հիշել նաև, որ հարազատներին ամեն անգամ ստիպում ենք վերապրել նույն ցավը, սարսափի ու վախի մթնոլորտ ստեղծում,

- Վիրավոր և բուժում ստացող զինվորականներին տեսանկարելիս և լուսանկարելիս խուսափել այնպիսի պատկերներից, որոնցում խոշոր պլանով երևում են, օրինակ, նրանց այրված դեմքը, կոտրվածքներն ու կտրված ոտքերը,
- Պահպանել նրանց արժանապատվությունը: Նման հրապարակումներով ոչ թե խղճահարություն առաջացնել, այլ կարեկցանք՝ ընդգծելով արտակարգ իրավիճակում գտնվող մարդկանց տոկունությունն ու կամքը,
- Մշակել ռազմական թեմաներով լուսաբանումների մասնագիտական առավել ընդգրկուն չափորոշիչներ ու կանոններ[20],
- Ցանկացած հրապարակման դեպքում ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ տեսանելի լինի խնդրի լուծման միտումը, բացառվի անելանելիության զգացումը,
- Ընդգծվել բարոյական չափանիշներն ու հավատը ապագայի նկատմամբ,
- Հրապարակումներում շեշտադրել ոչ թե թշնամությունը, այլ ունիվերսալ այնպիսի արժեքներ, ինչպիսիք են շնորհակալությունը, հոգատարությունը, սերը, առնականությունը,
- Տեսանելի դարձնել մարդկային տոկունության օրինակները:

Լրագրողական պարտականությունների կատարման դեպքում պետք է առանցքային լինի այն տրամաբանությունը, որ այդ հրապարակումները մարդկային ճակատագրերի մասին են և պետք է ուղղված լինեն նրանց արժանապատվությունը բարձր պահելուն, միևնույն ժամանակ պետք է նպաստեն հայրենիքի ու պետության անվտանգության ապահովմանն ու ամրապնդմանը:

---

[20] Թեև ռազմական գործողություններից հետո ՊՆ-ն փոքրիկ ուղեցույց պատրաստեց, բայց այն բոլոր հարցերը չի ընդգրկում:

РЕЗЮМЕ

Алагулян К. А.

ОСВЕЩЕНИЕ АПРЕЛЬСКОЙ ВОЙНЫ В СМИ – ПРАВОВЫЕ И ЭТИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ

Ключевые слова – *апрельская война, военные действия, государственная тайна, средства массовой информации, журналист, свобода информации*

В данной статье представлены особенности освещения апрельской войны в средствах массовой информации РА. Особенное значение придается правовым и этическим проблемам ее освещения на основе международного опыта и принципов. Предметом обсуждения является вопрос правильности используемых терминов, обеспечения права людей на осведомленность, а также необходимость подобных ограничений исходя из вопросов национальной безопасности и этических норм. Основным выводом является то, что, изначальное освещение войны в смысле противостояния в медиа сфере РА носило стихийных характер, в дальнейшем приобретая систематизированный характер с соблюдением некоторых этических и правовых норм. Исходя из вышесказанного, автор предлагает разработать необходимые стандарты освещения с сохранением последовательности конфликтных и постконфликтных освещений.

SUMMARY

Alagulyan K. A.

THE ILLUMINATION OF APRIL WAR IN MASS MEDIA: THE ETHICAL AND JURIDICAL PROBLEMS

Key words: *April war, hostility, State secret, mass media, journalist, freedom of information*

This article presents the peculiarities of April war illumination in RA mass media. Particular attention is paid to the ethical and juridical problems of its illumination on the basis of international experience and principles. The matter discussed is the correctness of used terms, the provision of people's right of

awareness as well as the necessity of such limitations out of problems of national security and ethical norms. The main conclusion to make is that initially in media field of RA, the illumination of war in the sense of confrontation had a spontaneous character later developing a regular character with the integrity of some ethical norms. Taking into account above mentioned, the author suggests developing the illumination standards necessary to keep the consistency of conflict and post conflict illumination.